ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

<<29 >> ապրիլի 2022թ.
Բաղրամյան համայնք Բղրամյան փ 2/3 հասցե էլ հասցե baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի N 39 -Ա

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների,

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՐՈՇՈՒՄ Է .

1.Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի՝ թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միհր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			
5.Մարտիրոսյան Հայկ			
6.Անտոնյան Արսեն			

7.Մկրտչյան Ռուզաննա _____ _____

8.Սաֆարյան Մարինե _____ _____

9.Ավետիսյան Աննման _____ _____

10.Կարոյան Լեոնիկ _____ _____

11.Հարությունյան Անի _____ _____

12.Պետրոսյան Եղիշ _____ _____

13.Պողոսյան Տաթևիկ _____ _____

14.Պողոսյան Արևիկ _____ _____

15.Գրիգորյան Սուրեն _____ _____

16.Պետրոսյան Մարութ _____ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Շանթ Առաքելյան*

Հաստատված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 29-ի
N 39-Ա որոշմամբ

ՕՐԱԿԱՐԳ

1. Բաղրամյան համայնքի 2022 թվականի առաջին նստաշրջանի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

   Զեկ Շ.Առաքելյան

2. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի <<Երվանդաշատի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին:

   Զեկ Մ.Հարթենյան

3. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի <<Երվանդաշատի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափը հաստատելու մասին:

   Զեկ Մ.Հարթենյան

4. ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Արևադաշտ գյուղի միջնակարգ դպրոցը՝ նվիրատվության իրավունքով տրամադրելու մասին:

   Զեկ Ա.Խաչատրյան

5. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային հատկացումներ ստանալու նպատակով՝ Բաղրամյան համայնքի սուբվենցիոն հայտերի հաստատման մասին

   Զեկ Շ.Առաքելյան

6. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2022 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին:

   Զեկ Ա.Կարապետյան

7. Հողատոսկի գործառնական նշանակության փոփոխություն:

   Զեկ Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2022 թվականի N 40 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի 2022 թվականի թիվ որոշումը <<Երվանդաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծելու մասին որոշումը համաձայն հավելվածի:

2.Հաստատել <<Երվանդաշատի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի

3.Բաղրամյան Համայնքի ավագանու սույն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,պետական գրանցման:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միհր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			
5.Մարտիրոսյան Հայկ			
6.Անտոնյան Արսեն			
7.Մկրտչյան Ռուզաննա			
8.Սաֆարյան Մարինե			
9.Ավետիսյան Աննման			
10.Կարոյան Լեոնիկ			
11.Հարությունյան Անի			
12.Պետրոսյան Եղիշ			
13.Պողոսյան Տաթևիկ			
14.Պողոսյան Արևիկ			

15.Գրիգորյան Սուրեն

16.Պետրոսյան Մարուք

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Շանթ Առաքելյան*

Հավելված
Բաղրամյան համայնքի ավագանու
«29» ԱՊՐԻԼԻ 2022 թվականի
N 40-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Երվանդաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր:

Հաստատությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Երվանդաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համար----------) իրավահաջորդն է:

2. Հաստատության հիմնադիրն է հանդիսանում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյանի համայնքապետարանը:

3. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

4. Հաստատության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գյուղ Երվանդաշատ Սահմանապահների 19:

5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր

պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Հաստատության անվանումն է՝ 1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Երվանդշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
2) հայերեն կրճատ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Երվանդաշատի մանկապարտեզ» ՀՈԱԿ
3) ռուսերեն լրիվ՝ ----------
4) ռուսերեն կրճատ՝ ----------
5) անգլերեն լրիվ՝ ----------
6)անգլերեն կրճատ՝ ----------
7. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
8. Հաստատությունն ունի պաշտոնական կայք՝ baghramyan.am, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:
9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
12. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

14. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:
15.Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

16. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
17. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

18. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

19. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

20. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ, իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4)կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

21. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

22. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

23. Հաստատությունում կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

20. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ, իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4)կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

21. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

22. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

23. Հաստատությունում կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝

«Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

24. Երեխայի ընդունելությունը հաստատություն իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Հաստատությունն իր գործունեության ուղղություններին համապատասխան մանկապարտեզ է՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ. Հաստատությունն աշխատում է շաբաթական հնգօրյա, օրական 9-ժամյա աշխատանքային ռեժիմով :

31. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

32. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

33. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է

հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
34. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

35. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝
1)նախադպրոցական տարիքի երեխան.
2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).
3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:
36. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

37. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
38. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
39. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

40. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն), որը աշխատանքի նշանակվում և ազատվում է օրենքով սահմանված կարգով:

42. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

43. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

44. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

45. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

47. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

48. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

49. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) հիմնադրի հետ քննարկելով և համաձայնեցնելով՝ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը՝ հիմնադրի հետ խորհրդակցելով՝ կատարում մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

50. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

51. Մեթոդիստը՝ (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4)կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

52. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

53. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

54. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

55. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

56. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

57.Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

58. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

59. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

60.Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

61. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

62.Հաստատության շենքը կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

63.Հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

64.Հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

65. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

66. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

67. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

68. Հաստատության՝ մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

69. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

70. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

71. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov

ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2022 թվականի N 41 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ենթակայության տակ գտնվող<<ԱՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածների

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՉՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միեր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			
5.Մարտիրոսյան Հայկ			
6.Անտոնյան Արսեն			
7.Մկրտչյան Ռուզաննա			
8.Սաֆարյան Մարինե			
9.Ավետիսյան Աննման			
10.Կարոյան Լեոնիկ			
11.Հարությունյան Անի			
12.Պետրոսյան Եղիշ			
13.Պողոսյան Տաթևիկ			
14.Պողոսյան Արևիկ			
15.Գրիգորյան Սուրեն			
16.Պետրոսյան Մարուք			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Շանթ Առաքելյան*

Հավելված
Բաղրամյան համայնքի ավագանու
«29» ԱՊՐԻԼԻ 2022 թվականի
N 41-Ա որոշման

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>
ՀՈԱԿ-Ի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը
1	Մանկապարտեզի տնօրեն	1	150000
2	Մեթոդիստ	0,25	130000
3	Բուժքույր	0,5	94000
4	Դաստիարակ	2,5	130000
5	Երաժշտության դասատու	0,5	94000
6	Հաշվապահ	0,5	94000
7	Դաստիարակի օգնական	2,2	120000
8	Տնտեսվար	0,5	94000
9	Խոհարար	1	94000
10	խոհարարի օգնական	0,5	94000
11	Լվացարար	0,25	94000
12	Հավաքարար	0,5	94000
13	Օժանդակ բանվոր	0,5	94000
14	Պահակ	1	94000
Ընդամենը		11,7	1470000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2022 թվականի N 42 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և համայնքի ղեկավարի իր լիազորությունների շրջանակներում կատարված առաջարկությունը

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեին սեփականության իրավունքով տալ Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 04092017-04-0031,հասցեն Արմավիրի մարզ գ.Արևադաշտ Գևորգ Չաուշի թաղամաս 1 ,մակերես 0.6486 հա ,շինության մակերես 396 մ.ք/ Արևադաշտ գյուղի միջնակարգ դպրոցը:

2.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին իրականացնել օրենքով սահմանված իրավասություններ գույքի տրամադրման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միհր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			
5.Մարտիրոսյան Հայկ			
6.Անտոնյան Արսեն			
7.Մկրտչյան Ռուզաննա			
8.Սաֆարյան Մարինե			
9.Ավետիսյան Աննման			
10.Կարոյան Լեոնիկ			
11.Հարությունյան Անի			
12.Պետրոսյան Եղիշ			
13.Պողոսյան Տաթևիկ			
14.Պողոսյան Արևիկ			

15.Գրիգորյան Սուրեն

16.Պետրոսյան Մարութ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Շանթ Առաքելյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, Բաղրամյան 2/3
Հեռ. (0233) 22250 ,
baghramyanbaghramyan.mut-armavir.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<29>> ապրիլի 2022 թվականի N 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ,ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ ԲՅՈՒԶԱՆԴԻ,ԻՍԱՀԱԿՅԱՆ,Պ. ՍԵՎԱԿԻ,Հ. ՇԻՐԱԶԻ ԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ,ՀՈՒՇԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԸ ՄԱՍՆԱԿԻ,5-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԸ ՄԻԱՑՆՈՂ ՀԱՏՎԱԾԸ, ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԸ, ՇԵՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ,ՎԱՆԱՆԴ ԳՅՈՒՂԻ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ, ՀՈՒՇԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՍԵՍՄԱԶԻՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ,ՀՈՒՇԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ,ԴԱԼԱՐԻԿ ԳՅՈՒՂԻ ԿՈՄԻՏԱՍԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ԵՎ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԹԻՎ 8, ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՔԱՐԱԿԵՐՏ ԵՎ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ԳՅՈՒՂԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ,ԲԱԳԱՐԱՆ ԵՎ ԱՐԳԻՆԱ ԳՅՈՒՂԵՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ,ԲԱՂՐԱՄՅԱՆ ԵՎ ՔԱՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԵՐԻ ԹՎՈՎ 2 ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ, ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի տնտեսական հարցերով զարգացման պատասխանատու Լուսինե Գասպարյանի կողմից ներկայացված՝ ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ գյուղի Շահումյան, Քարակերտ գյուղի Բյուզանդ, Իսահակյան, Պ. Սևակ, Հ. Շիրազ և Հ. Թումանյան , Հուշակերտ գյուղի 5-րդ փողոցի 1-հատվածը և 5-րդ փողոցը 4-րդ փողոցի միացման հատվածի ,Երվանդաշատ գյուղի Սահմանապահներ և Ազատության, Շենիկ գյուղի Մելքոնյան,Վանանդ Գյուղի Ա.Մարտիրոսյան փողոցների հիմնանորոգման, Հուշակերտ գյուղի մանկապարտեզի շենքի նորոգման, Դալարիկ գյուղի Կոմիտասի փողոցի թիվ 13 և Բաղրամյան փողոցի թիվ 8, Լեռնագոգ գյուղի 5-րդ փողոցի թիվ 2 շենքը, Բաղրամյան

գյուղի Արցախի փողոցի 37/1 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման , Քարակերտ և Երվանդաշատ գյուղերի Մշակույթի տան տանիքներին արևային կայանների կառուցման, Բագարան և Արգինա գյուղերի խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վերակառուցման, Բաղրամյան և Քարակերտ գյուղերի թվով մեկական թաղամասերի գազաֆիկացման և Լեռնագոգ գյուղի ոռոգման ցանցի վերակառուցման ծրագրային հայտերը:

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Դալարիկ գյուղի Շահումյան, Քարակերտ գյուղի Բյուզանդ, Իսահակյան, Պ. Սևակ, Հ. Շիրազ և Հ. Թումանյան , Հուշակերտ գյուղի 5-րդ փողոցի 1-հատվածը և 5-րդ փողոցը 4-րդ փողոցի միացման հատվածի ,Երվանդաշատ գյուղի Սահմանապահներ և Ազատության, Շենիկ գյուղի Մելքոնյան,Վանանդ գյուղի Ա.Մարտիրոսյան փողոցների հիմնանորոգման, Հուշակերտ գյուղի մանկապարտեզի շենքի նորոգման, Դալարիկ գյուղի Կոմիտասի փողոցի թիվ 13 և Բաղրամյան փողոցի թիվ 8, Լեռնագոգ գյուղի 5-րդ փողոցի թիվ 2 շենքը, Բաղրամյան գյուղի Արցախի փողոցի 37/1 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման , Քարակերտ և Երվանդաշատ գյուղերի Մշակույթի տան տանիքներին արևային կայանների կառուցման, Բագարան և Արգինա գյուղերի խմելու ջրի ջրամատակարարման ցանցի վերակառուցման, Բաղրամյան և Քարակերտ գյուղերի թվով մեկական թաղամասերի գազաֆիկացման և Լեռնագոգ գյուղի ոռոգման ցանցի վերակառուցման համար Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային հատկացումներ ստանալու նպատակով՝ Բաղրամյան համայնքի սուբվենցիոն հայտերը՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միհր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			
5.Մարտիրոսյան Հայկ			
6.Անտոնյան Արսեն			
7.Մկրտչյան Ռուզաննա			
8.Սաֆարյան Մարինե			

9.Ավետիսյան Աննման

10.Կարոյան Լեոնիկ

11.Հարությունյան Անի

12.Պետրոսյան Եղիշ

13.Ղողոսյան Տաթևիկ

14.Ղողոսյան Արևիկ

15.Գրիգորյան Սուրեն

16.Պետրոսյան Մարութ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Շանթ Առաքելյան*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 29-ի
N 43-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ

1. **Ասֆալտապատում թվով 6 բնակավայր՝**
   - Դալարիկ գյուղական բնակավայր՝ Շահումյան փողոց
   - Քարակերտ գյուղական բնակավայր՝ Բյուզանդ, Իսահակյան, Պ. Սևակ, Հ. Շիրազ և Հ. Թումանյան փողոցներ
   - Հուշակերտ գյուղական բնակավայր՝ 5-րդ փողոցի 1-ին հատված և 5-րդ փողոցը 4-րդ փողոցին միացնող հատված
   - Երվանդաշատ գյուղական բնակավայր՝ Սահմանապահների և Ազատության փողոցներ
   - Շենիկ գյուղական բնակավայր՝ Մելքոնյան փողոց
   - Վանանդ գյուղական բնակավայր՝ Ա. Մարտիրոսյան փողոց
2. **Մանկապարտեզ՝**
   - Հուշակերտ գյուղական բնակավայր
3. **Ֆոտովոլտային արևային կայան.**
   - Երվանդաշատ գյուղի Մշակույթի տան տանիքին 25 կվ/ժ հզորությամբ
   - Քարակերտ գյուղի մշակույթի տան տանիքին 50 կվ/ժ հզորությամբ
4. **Բազմաբնակարանային շենքի տանիքներ.**
   - Դալարիկ գյուղի Կոմիտաս փողոցի թիվ 13 և Բաղրամյան փողոցի թիվ 8
   - Լեռնագոգ գյուղի 5-րդ փողոցի թիվ 2-րդ շենք
   - Բաղրամյան գյուղի Արցախի փողոցի 37/1 շենք
5. **Խմելու ջրի ներքին ցանց.**
   - Բագարան գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում, պոմպակկայանի և ջրի կուտակման ավազանի կառուցում, նորոգում:
   - Արգինա գյուղի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում
6. **Գազաֆիկացում.**
   - Քարակերտ գյուղի թվով 1 թաղամասի գազաֆիկացում
   - Բաղրամյան գյուղի թվով 1 թաղամասի գազաֆիկացում
7. **Ոռոգման ջրի ցանցի կառուցում.**
   - Լեռնագոգ գյուղի ոռոգման ցանցի կառուցում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արմավիրի մարզ Բաղրամյան համայնք, Բաղրամյան 2/3
Հեռ. (0233) 22250 ,
baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<29>> ապրիլի 2022 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ-Ի ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով:

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2022թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի մասին հաղորդումը ընդունել ի գիտություն համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միհր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			

ıրտիրոսյան Հայկ

Անտոնյան Արսեն

7.Մկրտչյան Ռուզաննա

8.Սաֆարյան Մարինե

9.Ավետիսյան Աննման

10.Կարոյան Լեոնիկ

11.Հարությունյան Անի

12.Պետրոսյան Եղիշ

13.Պողոսյան Տաթևիկ

14.Պողոսյան Արևիկ

15.Գրիգորյան Սուրեն

16.Պետրոսյան Մարութ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Շանթ Առաքելյան*

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի
ավագանու 2022թ ապրիլի 29-ի N 44-Ա որոշում

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Բաղրամյան համայնքի 2022թ վարչական բյուջեի եկամուտների տարեկան 610110.4 հազար դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 125847.0 հազար դրամ, կամ առաջին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 20,6% -ով , որից սեփական եկամուտների առաջադրանքը 211082.5 հազար դրամի դիմաց կատարվել է 26089.9 հազար դրամ կամ կատարվել է 12,4%-ով :

Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված գույքահարկ 159389.5 հազար դրամ , մուտքը առաջին եռամսյակին կազմում է 17157.2 հազար դրամ կամ կատարվել է 10,8%-ով : Նախորդ տարիների հողի հարկի առաջադրանքը տարվա համար նախատեսված 12000.0 հազար դրամից հավաքագրվել է 5428.8 հազար դրամ կամ կատարվել են 45,2%-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 2103.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմում են 150.0 հազար դրամ կամ 5,1%-ով:

Պետական պարտքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 1500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմում են 664.5 հազար դրամ կամ 44,3%:

Պետական բյուջեից տրամադրվող դոտացիայի փաստացի մուտքերը կազմել են 99757.1 հազար դրամ :

Գույքի վարձակալությունից առաջադրանքը տարվա համար նախատեսված 11087.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմում են 1290.1 հազար դրամ կամ 11,6%:

Օրենքով սահմանված դեպքերում, համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման առաջադրանքը տարվա համար նախատեսված 4900.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմում է 600.0 հազար դրամ կամ 12,2%:

Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 9603.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմում է 717.0 հազար դրամ կամ 7,5%, որից աղբահանության վճարների մասով կատարվել է 9,6%: Համայնքի պատվերով՝ ծառայությունների մատուցման (մանկապարտեզ և երաժշտական դպրոցներ) մասով կատարվել է 5,7%:

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար բյուջեում նախատեսված 10500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմում է 60,2 հազար դրամ կամ 0,6%:

Ծախսեր

2022թ համայնքի բյուջեի վարչական մասի առաջին եռամսյակի ծախսը կատարվել է 16,7% -ով, 610010.4 հազար դրամ առաջադրանքից կատարվել է 101690.0 հազար դրամ: Ֆոնդային բյուջեի մասի առաջին եռամսյակի ծախսը կատարվել է 4,3%-ով , 360276.0 հազար դրամ առաջադրանքը կատարվել է 15512.7 հազար դրամ ,որից ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով նախատեսված ծախսերը կազմում են՝ վարչական բյուջեն (վ/բ)17,7% իսկ ֆոնդային բյուջեն (ֆ/բ)
4,3%:

Տնտեսական հարաբերությունների վ/բ-ն կազմում են 4,8%-ով իսկ ֆ/բ-7,6%:

Շրջակա միջավայրի պաշտպանության վ/բ-ն 17,1%:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության վ/բ-ն 11,5% իսկ ֆ/բ-ն 13,2%:

Հանգիստ , մշակույթ և կրոն վ/բ-ն 5,1% իսկ ֆ/բ-ն 83,9% այդ թվում մշակույթի տներ, ակումբներ,կենտրոններ վ/բ-ն 4,8% իսկ ֆ/բ-ն 83,9%:

Կրթության վ/բ-ն 6,4%,որից նախադպրոցական կրթության վ/բ-ն 4,2%, երաժշտական դպրոցի վ/բ-ն 16,0%:

Սոցիալական պաշտպանության վ/բ-ն 78,5%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փողոց 2/3
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am
հեռ. 023332550

ՈՐՈՇՈՒՄ

«29» ԱՊՐԻԼԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ N45-Ա

«ՕՐԳԱՆԻԿ ՖՐՈՒԹՍ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱՄԵՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 15-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ի մասի, 31-րդ կետով և հիմք ընդունելով «Օրգանիկ Ֆրութս»ՍՊԸ – ի տնօրեն՝ Ալեն Գալուստյանի դիմումը, ինչպես նաև Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը,

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄՅԱՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. «Օրգանիկ Ֆրութս» ՍՊԸ – ի սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04012022-04-0085 վկայական, տրված 04 հունվարի 2022թ□/ 04-022-0101-0069 կադաստրային ծածկագրով 28□6821 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 2.5104 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքը փոխադրել «ջրային հողեր» նպատակային նշանակության հողերի ոռոգման համար 45.000 $մ^3$ ծավալով ջրավազան կառուցելու նպատակով:

2.Առաջարկել իրավաբանական անձ «Օրգանիկ Ֆրութս» ՍՊԸ – ին համայնքային բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը 5,252,993 (հինգ միլիոն երկու հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության

փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշումը ընդունման օրվան հաջորդող օրվանից:

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1.Առաքելյան Շանթ			
2.Հարթենյան Միեր			
3.Սահակյան Մուշեղ			
4.Դավթյան Անահիտ			
5.Մարտիրոսյան Հայկ			
6.Անտոնյան Արսեն			
7.Մկրտչյան Ռուզաննա			
8.Սաֆարյան Մարինե			
9.Ավետիսյան Աննման			
10.Կարոյան Լեոնիկ			
11.Հարությունյան Անի			
12.Պետրոսյան Եղիշ			
13.Պողոսյան Տաթևիկ			
14.Պողոսյան Արևիկ			
15.Գրիգորյան Սուրեն			
16.Պետրոսյան Մարութ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Շանթ Առաքելյան*